



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Torhom Manougian, Primate

Թիւ 21657

Մարտ 11, 1969

Հոգեշնորհ
Տ. Միւռոն Ժ. Կրդ. Կրճիկեան
Հովիւ Ս. Փրկիչ Հայց. Սկեղեցւոյ
եւ Սախազան Ժիսկան Խորհուրդի
Ուսար,

Սիրելի Հայր Միւռոն,

Ստացած ենք 28 Փետրուար 1969 թուակիր բացատրական Ձեր նամակը
Ժիսկան Ժողովի օրինաւորութեան դէմ ներկայացուած բողոքի մը ի լուսա-
բանութիւն:

Թեմական Խորհուրդի Մարտ 6, 1969 նիստին մէջ նկատի առինք Ձեր ներ-
կայացուցած տեղեկագիրները եւ բացատրութիւնը, եւ որոշեցինք որ համայն-
քիդ կողմէ ընտրուած հինգ երեսփոխանները միայն ընդունուին իբրեւ գաւ-
զամաւորներ Թեմական Պատգամաւորական Ժողովի: Համայնք մը պէտք է Առաջ-
նորդարանի հաւանութիւնը ստանայ իր ունեցած երեսփոխաններուն թիւը
աւելցնելու համար եւ այդ փոփոխութիւնը պէտք է Ժիսկան Ժողովի Գրաւէրին
հետ ծանուցուի համայնքին:

Թեմական Խորհուրդի նիստին մէջ նկատի առինք որ կիրակի առաւօտ Սուրբ
Պատարագի մատուցման ընթացքին, առանց Ժիսկան Ժողովի նիստը օրինաւորապէս
բանալու, քուէարկութիւն կատարուած է: Այս անկանոն ընթացքը կը յանձնա-
րարենք որ չկրկնուի:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Յ. Գ.- Հաճեցէք Ժիսկան Ժողովի օրինաւորութեան մասին բողոք ներ-
կայացուցած Տիար Կիլպրթ Մարգարեանին յայտնել Թեմական
Խորհուրդի որոշումը առ ի զիտութիւն: